



# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 9786

29 մայիս 2018 թ.

## ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՎՃԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևանի պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ԵՊՀ) կանոնադրության 56-րդ կետի 10-րդ ենթակետի պահանջներով,

հրամայում եմ

1. 2017թ. ԵՊՀ եկամուտների և ծախսերի նախահաշվի «Այլ ծախսեր» հոդվածով նախատեսված միջոցների խնայողությունների հաշվին ԵՊՀ-ում հիմնական աշխատանքային պայմանագրով աշխատողներին վճարել դրամական պարգևատրում՝ նրանց հիմնական աշխատանքային պայմանագրով 2018թ. հուլիս ամսվա համար սահմանված աշխատավարձի 50 (հիսուն) տոկոսի չափով, բայց ոչ ավելի քան 0.5 (գրո ամբողջ հինգ տասնորդական) դրույքի չափով:

2. Սույն հրամանի 1-ին կետով սահմանված պարգևատրումը չի վճարվում 2018 թ. հունվարի 1-ից հետո կարգապահական տույժի ենթարկված ԵՊՀ աշխատողների, գիտական և գիտատեխնիկական աշխատանքներում ներգրավված անձանց, ինչպես նաև տնտեսվարական եղանակով գործող կառուցվածքային ստորաբաժանումների աշխատողներին:

3. ԵՊՀ գլխավոր հաշվապահին՝ սույն հրամանով սահմանված դրամական պարգևատրումը վճարել 2018թ. հուլիսի 6-ից:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ

Ա. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ